ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս (37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

N 11 10.03.2025 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում առկա «Բիզնես Ընթունթինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Գնման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի ղեկավարին ներկայացրած փաստերը և պահանջը.

Պատվիրատուի ղեկավարին ուղղված զեկուցագրով ներկայացվել է հետևյալը.

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի /այսուհետ նաև՝ հիմնադրամ/ կարիքների համար 2025 թվականի փետրվարի 5-ին հայտարարված համակարգչային սարքավորումների և օժանդակ սարքերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) արդյունքում 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Բիզնես Ընթունթինգ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00226052, էլեկտրոնային փոստի հասցե՝ tadevos89@bk.ru, հեռախոսահամար՝ +37477286227) կողմից ներկայացրած հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ՝

- Բիզնես Ընթունթինգ ՍՊԸ-ի հայտի. դիմում-հայտարարությունում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, Բիզնես Ընթունթինգ ՍՊԸ-ի վավերապայմանները թերի են լրացված՝ մասնավորապես բացակայում է ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը, միաժամանակ Բիզնես Ընթունթինգ ՍՊԸ-ի՝ համակարգի միջոցով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, առաջարկվող ապրանքի մակնիշի և արտադրողի

անվանման փոխարեն լրացվել է գնման առարկա հանդիսացող ապրանքի անվանում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 11-րդ կետի համաձայն «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ներկայացվել է ծանուցում՝ առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն շտկման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվությունների գնահատման արդյունքում արձանագրվել է որ «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի հավելված 1-ով սահմանված ձևաչափին համապատասխանող դիմում-հայտարարության շտկված տարբերակը և չեն շտկվել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում արձանագրված անհամապատասխանությունները:

Վերոգրյալով պայմանավորված սույն թվականի փետրվարի 28-ին ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները, առաջարկում ենք «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հիմնադրամի կարիքների համար 05.02.2025թ-ին հայտարարված Ընթացակարգի արդյունքում՝ 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 11-րդ կետի համաձայն «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ներկայացվել է ծանուցում՝ առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն շտկման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվությունների գնահատման արդյունքում արձանագրվել է որ «Բիզնես

Ընքաունթինգ» ՍՊԸ-ի կողմից պատշաճ կերպով չեն իրականացվել շտկման ենթկա փաստաթղթերի և տեղեկատվությունների շտկում:

2. 28.02.2025թ-ին ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բիզնես Ընքաունթինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների հայտարարվել է չկայացած:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Հիմնադրամի տնօրեն Գ. Քառյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով ընթացակարգի շրջանակներում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

Գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ պատվիրատուների կողմից տրված հարցադրումների վերաբերյալ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումների 26-րդ կետի համաձայն եթե մասնակցին սահմանված կարգով տրվում է հայտը շտկելու հնարավորություն և արձանագրված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չշտկելու և/կամ շտկման արդյունքում ևս անհամապատասխանություն արձանագրվելու պարագայում մասնակցի հայտը մերժվում է, և այդ հանգամանքը կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով որակվում է, որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչի հետևանքով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով (այն է՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը,) պատվիրատուի ղեկավարը կայացնում է այդ մասնակցին նշված ցուցակում ներառելու որոշում:

Այսպիսով՝

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում,

քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ներկայացրած հիմքերը՝ «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			**ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը**
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	**խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	**որպես ընտրված մասնակից** հրաժարվել կամ **զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**	
«Բիզնես Ընթաունթինգ» ՍՊԸ	00226052	ք. Երևան, Դավթաշեն 1թղ.27/12	X			10.03.2025թ. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/6

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ՝ **Գ. ՔԱՌՅԱՆ**